

ԼԵԻՈՆ Զ. ՇՈՂՈՅԵԱՆ



ՓՈՒՆՋ ՄԸ
ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ



Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ


1929

ՏՊԱՐԱՆ ՍԻՐԻԱՆ - ՊԱՂՏԱՏ




117 055

ԼԵԻՈՆ Ն. ՇԱՀՈՅԵԱՆ



ՓՈՒՆՁ ՄԸ
ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ



Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1929

ՏՊԱՐԱՆ ՍԻՐԻԱՆ - ՊԱՂՏԱՏ


11

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՓՈՒԿՆԵՐ ԵՎ
ՆՅԱՆՔԱՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՒՐՏԱՆ
ԵՎ ԳՐԱԿՈՒՆԻՍՏԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԿՈՒ ԲՕՍԷ

Հրասարակեղով «Փռնեց մը Ոսանաւորներ»ը փափափս եղած է մարմին աչ իմ պասսանեկական խոհումներուն եւ յոյզերուն միանգամայն, տարագրութեան կեանքի սեւ օղակաւորումներու վերջիշունն ընկնով, ապրիլ ու ապրիլեցնեչ այդ դառնութեան օրերու յիշատակը՝ որ իր մէջ ծրարած ունի փոխվրեժի հուրը:

Անփորձի եւ սկսնակ գրիչի սխարոթիւնս եւ խորապէս զգացած եմ, որը՝ անշուշտ շարունակական յղիւմներու կը կարօտի, ուստի կը յուսամ քե ընթերցող հասարակութիւնը ներողամիտ այժով պիտի նկատէ այս կէտը, որը պիտի ունի իմ այս փոքրիկ ձեռնարկիս որպէս զնահասականը:

Պաղտաւս

ԼԵՒՈՆ Հ. ՇԱՀՈՅԵԱՆ



ԼՐՈՒՐ ԳՈՒՒ ՍՈՒԽԿ

Լրո՛ւր, ո՛վ Սոխակ, ալ բա՛ւ է երգես,
Դալայլիկներովդ սիրտըս լեցընես,
Իմ տըխուր սիրտը երգի կարօտ չէ,
Լրո՛ւր, դու սոխակ, ա՛լ բաւ է երգես:

Երգերովդ քաղցըր զիս մի՛ կաշկանդեր,
Իմ մըտածմունքըս դուն մի՛ խանդարեր,
Քո քաղցըր ձայնը ինձի զիւր չի գար,
Լրո՛ւր, դու սոխակ, իմ մօտըս մի՛ գար: ॥

Վարդենին է միշտ քո սիրահարը,
 Եւ ո՛չ թէ անտէր անպաշտպան հայր,
 Գրնա՛, դու երգի՛ր քո սիրած վարդին,
 Լաւ է քան երգես չը սիրած մարդին:

Որտեղից որտեղ դուն մեզ մօտ եկար,
 Խեղճ գաղթականաց դու այստեղ գըտար,
 Եթէ մեզ պէս ես աքսորուած, գերի,
 Քու խղճուկ կեանքը կը մընայ թերի:

Նայի՛ր չորս կողմըդ, ինչեք կը դիտես
 Ամեն կողմըդ լա՛ց, արցունք կը տեսնես,
 Ո՛հ այսքան լացի, ո՛նց դու երգում ես
 Լըռի՛ր, դու սոխակ, ալ բա՛ւ է երգես:



ԾԱՐԱՆ ԾԱՐԱՆ...



Շարան, շարան իրար կողքից,
 Քարշ են ընկած բռնի կամքից,
 Երկարաձիգ ճամբաներում
 Գաղթականներ գանդազ գնում:

Ամեն ոք էլ զուրկ է հացից
 Եւ վախենում իրեն մահից,
 Ծարաւ, սոված, իրար կողքից
 Հալածոււմ են բռնի կամքից:

«Հա՛ սոված մեռայ» ասում է մէկը,
 «Վա՛յ ծարաւ մեռայ» ասում՝ երկրորդը
 «Ա՛խ ս՛պանուեցայ» ասում երրորդը
 Խեղճ Հայք ձեր ծառը կերել է որդր:

Որքան ամայի լուռ է այս ճամբան ,
 Որ մարդի համար չի ճարուում մի բան ,
 Ո՛չ ջուր ես գտնուում ես ո՛չ էլ չոր հաց
 Ա՛խ Աստուած վեր կաց եւ աչքերըդ բաց :

Յայնժամ ով Աստուած , ե՛լ վարագոյրդ բաց ,
 Տես ի՛նչքան աչքեր գու կը տեսնես թաց ,
 Որ քեզ են միայն օգնութեան կանչում
 Ընկած աղօթում սարերի լանջում :

Ելի՛ր տեղիցըդ թշնամին եկաւ ,
 Քո եղբօրըդ տե՛ս , նա անյազ կերաւ ,
 Ելի՛ր շուտ փախչինք դուցէ աղատուինք
 Թշնամուց վրէժ վերջը կը լուծենք :

Ա՛խ մեռայ , ամա՛ն , վեր կալ կարող չեմ ,
 Թող ինձի հանդիստ որ շունչըս փրչեմ ,
 Դ՞ու թող ինձ ախտեղ , ինքըդ շուտ փախիր ,
 Այդ մեր կրածը ամենքին պատճիր :

Նախ Աստուած , տուր մեզ այն զօրութիւնը ,
 Որ չի ունեցել խեղճ հայութիւնը ,
 Տանք նոյն պատիժը թշնամիներին ,
 Որ նըրանք տուին մեր խեղճ հայերին :



ՉՈՐՈ ԿՈՂՄԸ ԼԱՅ ՊԱՔՈՒՊԱՅԻ (*)

Չորս կողմը լաց եւ հեծեծանք ,
 Այս ինչ զուլում է Աստուած .
 Մայր և որդի , եղբայր ու քոյր
 Իրար երբէք չեն ճանչնար :

Փողոցներում իրարանցում
 Եւ աղաղակ անպակաս ,
 Խուճը մը լալիս , խուճը մը բռնած՝
 Տանում են դաշտ մարդիկ մեռած :

Հինգ չէ , տաս չէ , տասնը՛հինգ չէ ,
 Քառսուն , յիսուն ամեն օր ,
 Մէկը լալիս աղուն վերայ
 Մի ուրիշը իր եղբօր :

* Պախուպան Պաղտասի հիւսիս արեւելեան կողմը 31 մղոն (մայր) հեռավորութեան վրայ գիւղախաղախ մըն է :

Թուրքի հաղածանիէն փախստական Վասպուրականցի և Պարսկահայ ժողովուրդը և Վերջին Մուսուլի կողմէն աղսագրուած հայ բեկորները Անգլիական կառավարութեան կողմէ այս գիւղախաղախի մօտիկը Տիւրա գետի ափին գիւնորական փրանկերու սակ գետնաշէնով շուրջ չորս արի կերակրուած են :

Հիւանդ տըղան մօրը գրկած
Արտասուալից աչքերով
Մայրի՛կ, կ'ըսէ, մի՛ թողնե՛ր որ,
Տանեն ինձի քո մօտէն:

Հիւանդ տըղան իմանում է,
Իրեն տարւած այն վայրը
գընացողը ետ չի դառնայ,
Կը մեռնի հոն կը մընայ:

Լյուսած սրտով մայրը ասում,
«Չէ՛, չեմ թողնի որ տանեն
Հանդիստ կացիր իմ աչքի լոյս,
Քեզի քովըս կը պահեմ»:

Այլ տեսարան: Մի խումբ մարդիկ
Խոված, ծարու, աչխատում,
Տաք արեւի շողերի տակ
Քիչ կը տեսնես առողջ մարդ:

Դժգոյն՝ գործում մըթմրթալով
Իրանց բախտըն անիծում,
Գունաթափուած, կիզիչ տաքից
Նըման աչնան տերեւի:

Խեղճ մանուկներ ոտարորիկ
Զրկուած հօրից ու մօրից,
Ման են գալիս տաք արեւին,
Գուցէ իրանց հաց ճարեն:

Ծեր այրերը եւ կիները
Եկեղեցի են գընում,
Աղօթելով օր ու գիշեր
Աստծոյ դուժք խընդըրում:

Շատ երկիրներ ման եկայ ես,
Շատ քաղաքներ տեսայ ես,
Քեզ պէս անպէտք տեղ չը տեսայ,
Դու վատչուէր Պաքուպայ:

Նըզո՛վք քեզի, գեհնն հսկայ,
Դու գարչելի անապատ՝
Քանի հաղար հայեր կերար,
Ո՛վ մարդակուլ Պաքուպայ:

Հայ սերունդը քեզ չի մօռնար,
Դարեր դարեր կը պատմեն
Հայ չկօթակի երգերուն մէջ
Այսպանելից ցուրտ Պաքուպայ:

Օգրդ միշտ տաք, ջուրերըդ տաք,
 Պրտուղ չունես ոչ իսկ մի հատ,
 Իսկ պաշարըդ էլ հարց չըկայ,
 Չոր փայտի պէս համ մը կուտայ:

Քանի՛ քանի՛, մեր ազգիցը,
 Կուլ տուեցիր Պաքուպայ
 Միթէ դու գեռ չը կ'չտացա՞ր
 Ո՞վ սոված դայլ Պաքուպայ:

Քո բերանից փախչողները
 Կ'առեն քեզի անդադար
 Օր ու գիշեր քեզ կ'անիծեն
 Կործանումըդ կ'ակնկալեն:



ՀԵՌԱՅԻՐ ՄՐՐԻԿ



Հեռացի՛ր մըրիկ դու Պաքուպայից,
 Ծագի՛ր, ո՞վ արեւ դու հորիզոնից,
 Կորցրած բոյներս փնտռում, չենք զըտնում,
 «Վաթա՛ն» ասելով «վաթա՛ն» կանչելով:

Դէ՛հ կորի՛ր մըրիկ, մի՛ փչիր աբազ,
 Խեղճ հայու սիրտը կը մխես դանակ •
 Կորցրած հայր ու մայր անտէր որբերը
 Թող տուր որ հանգիստ մընանալըները:

Մի՛ փըչեր մըրիկ, այսպէս անուի,
 Ինչ ըրած է Հայն, նըման մեռելի
 Թողած դարաւոր կըտուրը անգին •
 Գոնէ՛ դու զըթայ, ով Աստուած վերին:

Կատղած փըչում ես, ա՛խ, ամեն կողմից,
 Վըրէ՞ժ ես լուծում խեղճ անտէր Հայից
 Մեզնից ի՞նչ կուզես, հերիք է հերիք,
 Ինչո՞ւ չես գըթար, հանդարտի՛ր մըրիկ:

Գըթա՛, ո՛վ Աստուած, բաւ է, բաւ է ա՛լ,
 Միթէ նսե՞նն է մեր՝ յաւէտ լալ, ողբալ,
 Թողնում ես այսպէս զայն՝ ստրուկ ու գերի
 Որ յօշոտէ զայն միշտ սուրբ օտարի:

Նա ո՛ն չի լըսում մեր լացն ու բողոք,
 Միրտը քարացած ստեղծողն անողոք,
 Մըրրիկըն անգութ ա՛ն մեղ է՝ սպաննում,
 Քընել է Աստուած եղբարք չի լըսում:

«Կը փըչեմ» կըսէ, չեմ զազրի մի ժամ,
 Տասնեակ տարիներ, պիկըջ յարածամ
 Տաք քամիէն վերջ փոշի կը թափեմ,
 Հայերը ամբողջ փոշով կը խեղդեմ»:

Ասում, անում են, չեն զազրում մի ժամ
 Կըրակն ու սապը, քամին ամեն ժամ.
 Կոտորուանք ամբողջ, այս ինչ զուլում է
 Գըթա՛, ո՛վ Աստուած, վե՛ր կաց հերիք է:



ՍՈՒՐԱԿԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ



11-1484694

Անապատի մէջ ի՞նչ ես որոնում,
 Ով իմ վըշտակից սիրելի սոխակ,
 Թըռի՛ր, հեռացիր դու Պաքու պայից,
 Պատմիր մեր զարգը ով իմ զարդակից:

Իզուր որոնում կարցըրած եարդ,
 Այս անապատում չի ճարուիր վարդըդ,
 Դու թեւեր ունես, թըռի՛ր, հեռացի՛ր,
 Այս անապատը իսպառ մոռացիր:

Քեզի ս՞ր բազը ձըգեց այս տեղում,
 Անտէր միայնակ քու երգը երգում,
 Խեղճ Հայք են այստեղ թշուառ, անանուն,
 Գընա՛, մեր զարգը պատմի՛ր ամենուն:



Բոլոր ուժովըդ երկինք սըլացիր,
 Մեր փոխարէնը դու այնտեղ լացիր,
 Պատմիր Ասածուն մեր սողաչանքներ,
 Մեր ամբողջ կըրած սև չարչարանքներ:

Թըռչելով անցիր դէպի Հայաստան,
 Պատմիր մեր կըրած տառապանքն այսքան
 Նըրանք հայեր են մի գուցէ գըթան
 Որ խեղճ հայք այստեղ անտէր չը մընան:



ՊԱՔՈՒՊԱՅԻ ԳԱՂԹԱԿԱՆԸ



Կէս գիշերին արթընցայ,
 Տըխրութիւն մը զգացի,
 Եւ լուսինը երկինքի,
 Մեղամաղձոտ՝ դիտեցի:

Ինձի աստ՝ ո՛վ լուսնեակ,
 Ի՞նչ ես տեսնում այդ տեղից
 Եւ ինչերի ես գիտակ
 Թափառական հայ կեանքից:

Լուսնեակ ինչո՞ւ լըռած ես,
 Արդեօք ինչե՛ր տեսած ես
 Լա՞ց, թէ՛ անէճքը անվերջ
 Որք ու անտէր հայուն մէջ:



Տ Ե Ղ Ր Թ Ս



Կանգնի՛ր, Տիգրիս ու՞ր փակչե՞ս,
Քո այգ սիրուն ափերից,
Կանգնի՛ր, միթէ լրսել չե՞ս
Յուզուե՞լ ես իմ աղերսից :

Գընում ես այգ ափերով,
Գուցէ տեսնես իմ կարը,
Կասես իրեն օրերով,
Ողբում է սէրդ, չիք ճարը :

Կասես նըրան քո կարը
Անցորդներին հարցանում
Ման է գալիս մինչ սարը
Ամեն տեղ էլ քեզ փնտռում :


Ման է գալիս ողջ երկիր,
Կարծես գէրվիչ է գառել.
Գէթ ըստանայ քեզնից զիր
Թէ՛ ո՞ր ճիւղին ես թառել :

Կ'ասես նըրան, ունենայ գու՞թ
Չ'թողնէ զիս անտէր, խեղճ,
Աշխարհն չընէ ինձի մու՞թ,
Եթէ ունի մի քիչ խիղճ :

Ալ մ'սպասե՞ք, ա'նց Տիգրիս,
Գընա՛ գըտիր իմ կարիս
Այրած սրտէս ու բերնէս
Լսածներդ նրան պատմես :



ՀՈԳԻՍ ԻԱՒԱՐԵՑ



Հոգիս խաւարեց, ո՛վ իմ սիրական,
 Սիրտըս փուլ եկաւ ինկեր եմ ական
 Պիտի չարչարուեմ ու պիտի թըքնիմ
 Մինչեւ զըժողքի մէջը ես քընեմ:

Այդ ինչիցն էր որ դու ինձ սիրեցիր,
 Ասիր, իրարից մննք չենք բաժանուիր,
 Բայց վերջը, նա՛մարդ, ուխտդ զրժեցիր
 Ե՛ւ ինձի այսպէս խելքից հանեցիր:

Ա՛խ, այն ժամանակ շատ ուրախ էի,
 Որ քեզ պէս աղւոր սիրած ունէի,
 Բայց վերջը, անգո՛ւթ, այնպէս արեցիր,
 Որ լացի սուղի մէջ զիս ձգեցիր:

Գիշերներ մենակ մէկուսի նըստած
 Քեզի կը յիշեմ ու կը լինեմ լաց
 Անվերջ երգերով կը յիշեմ սէրըդ
 Իցի՛ւ սրտիս մէջ խրէիր սուրըդ:

Անքուն չզջիկ մ'եմ, կարօտ կը քաշեմ,
 Երազներիս մէջ միշտ քեզ կը կանչեմ
 Ապուշի պէս եմ, ըրածս չ'գիտեմ,
 Զի կորուսի ես, իմ քաղցըր եղեմ:

Անձրեւովդ թըջէ սիրտը իմ եարիս,
 Ո՛հ Աստուած, գուցէ, կակղի սիրէ զիս,
 Իսկ թէ չը սիրէ թողնէ տնաէր մունջ
 Պիտ անիծեմ զինքն մինչև վերջին շունջ:





ՍՈՒՍԿ

Բախտաւոր ես ո՛վ դու սոխակ,
Որ թռչում ես վարդից վարդ,
Զըմայում ես ու գայլայում,
Քաղցրը երգեր ես երգում:

Երգէ՛, սոխակ ձայնիդ մատաղ
Երգէ՛ քաղցրիկ զիլ երգերը,
Յրուէ՛ դարդերս, երգէ՛ ինձ տաղ,
Ա՛խ ըրեր դու, շուտ զիս գերիդ:

Հպա՛րտ, հպա՛րտ դու երգում ես,
Շքեղազարդ պարտէզում
Վեր ես թռչում վար իջնում ես
Դու քեզ արքայ ես կարծում:

Կ'անցնի գարուն, կ'ուզայ ձրմեռ,
Վարդըդ շուտով կը թուամի
Այն ժամանակ դուն էլ ինձ պէս
Արտասուելից կ'աւաղես:

Ե՛կ թող պատմեմ, քեզի համար
Իմ դարդերըս անհամար,
Ե՛կ, քեզ պատմեմ այն ցաւերը
Որ ճար չարին մարդերը:

Ախ ինձ նրանք ճար չարեցին,
Խեղազար մը զիս կարծեցին,
Եւ փոխանակ ինձ յոյս տալու
Դրկեցին ա՛խ գէպ զիրկ մահու:

Այս դարուն մէջ քիչ մարդիկ կան,
Որ մարդի դարդ կիմանան,
Եւ շատ էլ քիչ օրիորդներ
Տուած խօսքնին կը մընան:

Երգէ՛ սոխակ մինչ դարուն է,
Վարդդ կարմիր դեռ բացուում է:
Ա՛խ իմ վարդըս թուամեց շուտով
Ողորմիր Տէր, ինձի փութով:



Տ Ա Ռ Ա Պ Ա Ն Ք Ս




Այս ինչ ցաւ է ա՛խ Աստուած,
 Որ ինձ այսպէս կը տանջէ,
 Միթէ ո՞վ է ինձ տուած...
 Զիմացողին մի բան չէ:
 Ցաւս շատ է ինչ անեմ,
 Վրդովմունքս որո՞ւ ղէմ...
 Ինչ մըտածմունք որ ունեմ
 Ինքս էլ ս'տոյգ չը գիտեմ:
 Գիտեմ միայն ու կըղզամ,
 Որ իմ հոգին սեղմուի
 Հէնց որ նըրան կս մօտ գամ
 Գըլխէս խելքըս կը թ'ոչի:
 Այդ իմ սէրս է միշտ գոված
 Կեանքըս նըրան նուիրած
 Բայց նա ինձի ուրացաւ
 Առկայծ ճրագս մարեցաւ:

Եարար, ինչո՞ւ ինձ մոռցաւ
 Թողեց ինձմէ հեռա՛ցաւ
 Ա՛խ միթէ դու գու՛թ չունե՞ս,
 Որ ինձ մեռակ կը թողնես:
 Օրըդ ուրախ անցկացնում,
 Ինձ այստեղ ես լացացնում,
 Իմ այս գըժբախտ սև կեանքիս
 Ծըրագն ինչո՞ւ կս մարում:



ԱՆԳՈՒԹ ՄԻՐԱԿԱՆ



Ե՛կ իմ սիրական անգութ մի՛ եղիր,
Այ բաւ է այսքան շատ զիս չարչարես,
Եթէ ինձի դու չը պիտի սիրես,
Լաւ է դագաղքս չուտով պատրաստես:


Դու հասակ ունես ինչպէս թէ նոճի,
Քեզ բամբասողի սիրտը թող մաշի,
Մազերդ ոսկեթել ունքերդ կամար,
Ձեռքերդ ճերմակ, ինչպէս թէ մարմար:

Կուրծքդ շատ լայն է, թեւերդ երկայն,
Ծրճերդ կըլտր նարինջի նրման,
Քայլքդ կաքաւի, ինքդ աղաւնի,
Եկ ինձի սիրէ՛ եւ նազ մի անի:

Խեղճ սիրահար մ՛եմ քեզ գովեմ ձըրի,
Թող Տէր Աստուածըն իղճքս կատարի,
Սէրըս սէրիդ թող կապէ անբաժան,
Մէկ տեղ մենք ապրենք ցլեբշ յարածամ:



ԲԱՆՏՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ



Ձեռք ոտքըս կապուած բանտում միայնակ
Սիրտըս կը նեղուի ինքըս անտեղեակ,
Լըսէք եղբարք իմ խօսքերըս յտակ
Ձուներմ մի յանցանք, դուք եղէք տեղեակ:

Գիշեր ու ցորեկ արցունք կը թափեմ,
Կույամ ու կ'ողբամ, Աստուծոյ կաղաչեմ,
Ինչու դուրս ելայ իմ հայրենիքից,
Օտար երկըրում չուներմ ցաւակից:

Բանտի դռները կղպանքով կապուած,
Իմ ոտքերըս էլ չըլթայ զարնուած,
Խելքըս պըտըտում, ինքըս մոլորած,
Արդեօք կաղատուեմ թէ ես եմ կորած . . . :

Շըղթաներըս ինձ շատ շուտ մաշեցին
Նըպատակներըս թերի թողուցին
Օտար երկըրում զիս բանտարկեցին
Սիրելիքս ինձի կարօտ մընացին:


Մի նառնակ գրրեմ աղիդ եղբօրբս ,
 Բարեներ յիշեմ հարազատ մօրբս ,
 Նրբանք կիմանան իմ քաշած օրբս ,
 Եթէ չեն մեռած իմ կարօտովբս :

Լըսէք ընկերներ և ամբողջ հայեր ,
 Լինել համբերող շատ է շահաւոր ,
 Մեռնել զերթ անմեղ , քան թէ յանցաւոր
 Աղգին ինձ նրման շատ է հարկաւոր :

Տեսէք եղբարք իմ , քաշած տանջանքներս .
 Շատ լացի , լըսէք , իմ աղաչանքներս
 Օգնութեան հասէք դուք հայ զաւակներ
 Ձեզ նրման ևս էլ ունիմ փափաքներ :



ԿՈՐՅՐԱԾ ԲԱՂԳԸ



Տիգրիս գետը փրփրալով կը վազէ
 Կարծես նա էլ ինձ պէս իր բախտը կ'որոնէ
 Նա կը լսէ իմ ցաւերն ահաւոր
 Քանզի ինձ պէս դարդեր ունի սգաւոր :

Տիգրի'ս պատմեմ իմ ցաւերը անհամար
 Գուցէ դուն իմ ուզած վայրը շուտ հասար ,
 Գըտիր այնտեղ ինձ նմաններ բախտակից
 Գուցէ նրբանք լինեն ինձի ցաւակից :

Բախտը պիտի որոնեմ ևս մինչ զըսնեմ ,
 Նպատակիս հասնելու ջանք պիտ' թափեմ
 Մինչ կորցբած իմ բախտը ևս ևս դարձրնեմ
 Այն ժամանակ շուռչս հանդիստ ևս կառնեմ :



ԽԱՐՈՒԱՅ ՍԻՐՐ

Արեգակը մայր մտաւ,
Իւր գեղեցիկ շողերով,
Եկաւ գիշերը խաւար
Ծածկեց երկինքի կամար:

Մութը պատեց ամեն տեղ,
Չկայ շարժում ոչ մի տեղ,
Ամենք մասն իրանց տուն
Հանգստացան եզան քուն:

Իսկ այն ատեն մէկը կար
Որուն քունը դեռ չէր գար,
Անկողնին մէջ շուռ կուգար
Այս կողմ՝ այն կողմ ու կուլար:

Նա իւր լացը կտրեց վերջը
Վիշաք մըտել էր մէջը
Դուրս նետեց գինքն ու ժգնակի
Կեցաւ առջևն մի շէնքի:

Նա այդ շէնքից վեր նայեց
Այս ու այն կողմ սրտնեց
«Չկա՛յ, ամա՛ն» հառաչեց
Ու իր սիրտը տանջուեց:

Խեղագարի մը նըման
Այս կողմ այն կողմ նա վազեց,
Մէկ էլ յանկարծ կանգ առեց,
Ականջ դրեց ու լսեց...:

Իր սիրուհին խօսում էր
Մի անձանոթ մարդու հետ...
Սիրտ էր տալիս: Սիրում էր...
Լսեց որոշ այս խօսքեր...:

— Սիրակա՛նս, հանգիստ եղիւր,
Սերտըտ երբէք մի՛ նեղիւր,
Մի՛ լար իզուր, մաղաչի՛ր
Կարմիր թուշս տամ քեզ, պաշի՛ր:

— «Ինչպէ՞ս չի լամ, չարասուեմ
Իմ դարդերս քեզի չ'ասեմ...
Մտածելով կեանքս մաշե՞մ,
Ու շարունակ սպասեմ:»

— «Թէ՛ չես ուղում, սպասել,
Ուզում ես շուտ պսակուել,
Ուզարկիր մէկը մեզի
Թող ուզեն շուտ զիս քեզի:»

— «Բայց՝ որ ինձի շը տայ հայրդ,
 Նմանապէս կոպիտ մայրդ,
 Այն ժամանակ ին՞չ պիտ անեմ
 Որ քեզ առնեմ ու տանեմ :»

— Ես կ'ըսեմ իմ հայրիկին
 Ու իմ անուշ մայրիկին
 Թէ՛ ես քեզի կը սիրեմ
 Կեանքըս սիրոյդ պի՛տ դոճեմ :



Խեղճը լսեց սառստեց,
 Երակներում արի՛ւնն ցամքեց
 Ընկաւ գետին ինչպէս մարած
 Աչքերը ձայնի կողմը յառած :

Բայց ի վերջոյ սթափուեց
 Իր ուժերը հաւաքեց
 Մի քիչ կանգնեց, մտածեց
 Նրանց վրայ յարձակուեց :

Բայց իր ոյժը չի դօրեց
 Միւսը զինքը շուտ բռնեց
 Տնցեց գետին գլորեց
 Խեղճի խելքը մոլորուեց :

Ապա դարձաւ աղջկան .
 Հսաւ , փախնենք ձայներ կան :
 Արագ փախան զնացին
 Խեղճ տղան հոն թողուցին :

Միւս օրը էլ չը դտան
 Մեր այդ ծանօթ խեղճ տղան
 Արդէն խելագարուել էր
 Փողոցներում կը թափառէր :

Նա որին որ պատահէր
 Փէշից ուժգին կը բռնէր ,
 Ու կը պատմէր նման խենթի
 Իր դարդերն առանց խինդի :



Սուս սիրոյ գերին մի՛ ըզար դու արդ,
 Որպեսզի ըզաս վեհ, յարգուած մարդ :





ԱՆԿԵՂՍ ՍԷՐ—



- Տղան.** — «Երկար տարիներ ըզքեզ սիրեցի
 Ձը կրցայ գըտնել քեզ նըման հուրի.
 Օրիտ'րդ, խօսք տուր ինձ, չ'սիրել այլին
 Պատմիր սէրերըդ քո սիրած եարին»:
- Աղջիկը.** — «Ես էլ սիրեր եմ երկար տարիներ,
 Կեանքըս քեզ մատաղ ինքըս անձնուէր.
 Տըղա՛, քո սիրոյդ վշտեր քաշեցի
 Ի՛նչքան տարիներ սիրտ մաշեցուցի»:
- Տղան.** — «Դու մի վարդ եղիր, ես էլ քեզ սոխակ,
 Այս աշխարհում քեզ սիրեցի միակ.
 Օրիտ'րդ, բոյր ունես որպէս թէ մեխակ,
 Պաշտելիս եղար, դուն իմ հըրեշտակ»:
- Աղջիկը.** — «Դու աղբուր եղիր, իսկ ես էլ առուակ,
 Իրար խառնենք մեր սէրերըն համակ,
 Տըղա՛, քո սիրոյդ ես եղայ վըտակ,
 Բաւ է ինձ գըրես բերկրառիթ համակ»:

- Տղան.** — «Քո սիրոյդ համար աղբուր կը լինիմ
 Բոլոր հոգերըդ ինքըս կը տանիմ,
 Օրիտ'րդ, ինձ գըրիր մի սիրուն համակ
 Կեանքըս ընեմ քեզ զո՛հ, պաշտանք, համակ»:
- Աղջիկը.** — «Կըլլամ միշտ ստրուկ, դու էլ իմ տէրը,
 Աստուած կատարէ մեր սըրտի սէրը,
 Տըղա՛, քո սիրոյդ ես եղայ գերի
 Թերի համակիս, դու, խնդրեմ ներիս»:
- Տղան.** — «Այսօր ստացայ քեզնից մի համակ,
 Բարախեց սիրտըս իմ կեանք ու հոգեա՛կ,
 Օրիտ'րդ, քո սէրը շուտով ինձ մաշեց
 Քաղցըր խօսքերըդ միտքըս պարարեց»:
- Աղջիկը.** — «Մի օր ստացայ քեզնից մի ծըրար,
 Մէջէն դուրս եկաւ քո սիրուն նըկար.
 Տըղա՛, լուսինը եղած էր կամար,
 Երբ ձեռքըս առի՛ սիրտըս կը դողար»:
- Տղան.** — «Սոխակ կ'ըսպասէ գարնան ետ գալուն,
 Աչքըն է ճամբին վարդի բացուելուն,
 Օրիտ'րդ, կըսպասեմ ես էլ քո գալուն,
 Առաւօտեան անոր րփի ծագելուն»:

Աղջիկը . — «Դու մի հատիկ ես ինքքդ գովական ,
Գեղունուդ մօտը միշտ էլ պատուական ,
Տըղա՛ , ես ունիմ շատ գըրեղու բան ,
Կեանքըս ամեն ժամ լինի քեզ զուրբան» :

Տղան . — «Վարդագոյն շորերդ հագած , դարդարուած ,
Վարդենու նըման շաղուած , կարմըրած ,
Օրիո՛րդ , այտերդ խընձոր է դստած ,
Քո անկեղծ սէրն է իմ սիրտը վառած» :

Աղջիկը . — «Ա՛խ ու՛ր ես գու իմ սըրտի սիրահար ,
Չեմ կարող գըտնել քեզ նըման գոհար
Տըղա՛ , ու՛ր կ'երթաս ինձ մի մոտանար
Մի օր չը տեսնեմ կ'եղնեմ խելադար» :

Տղան . — «Պատշգամուսն ես , վարսերդ փայլուն ,
Ունքերդ գծուած կարծես թէ լուսին ,
Օրիո՛րդ , աչերդ սիրուն վառվըռուն
Դէմքդ դեղեցիկ՝ ինչպէս մի գարուն» :

Աղջիկը . — «Ճամբայ երթալուդ ինձ շատ կը նայես ,
Սիրտդ իզուր աեղ ինչ՞ու կը մաշես ,
Տըղա՛ , դու պիտի լինես իմ փրկիչ
Այդ է կամեցած ինքըն Արարիչ» :

Տղան . — «Վարդերու մի փունջ ես պատրասեցի
Չորս դին մանուշակ սիրուն շարեցի
Օրիո՛րդ , քեզ համար նուէր բերեցի
Քո անկեղծ սիրոյդ՝ սարեր չափեցի» :

Աղջիկը . — «Ման գալած տեղուցդ ես լինեմ հէյրան ,
Պատրաստած փունջըդ հարսանեաց նըշան ,
Տըղա՛ , դու եղար սարերու ջէյրան
Երբեմն էլ ինձ տար քո հետդ սէյրան» :

Տղան . — «Ա՛ռ այս մատանիս իմ սիրոյ նըշան ,
Թող վըկայ լինի երկընքի Աբջան ,
Օրիո՛րդ , սա է որ կընէ անբաժան ,
Երկու սիրահար երբ իրար խօսք տան» :

Աղջիկը . — «Հօբըս շուտ գըրիր մի կըտրուկ համակ ,
Իմ կամքս առած համարիր , հոգեա՛կ ,
Տըղա՛ , մ՛ըսպասեր երկաբ ժամանակ ,
Միասին խըմնեք մեր սիրոյ բաժակ» :


Տղան . — «Անկեղծ սիրուհիս , վերջացնենք մեր ուխտ
Դստնանք միասին , երկուքս ենք պանդուխտ ,
Օրիո՛րդ շուտ երթանք գէպի հայաստան
Այնտեղ անուշ է , աշխարհ բուրաստան» :

Աղջիկը. — «Ակնարկած ուխտորդ սիրտըս կը վառէ
 Աստուած ինքը մեր իղձը կատարէ.
 Տըզա՛, հոն ապրիլ, որքան բարձրէ,
 Մայրենի հողը միշտ էլ քաղցըր է»:

Միասին — «Երկու բաժակներ իրարու զարնենք,
 Անկեղծ սէրերնուս կենացը պարպենք,
 Եւ երջանիկ կեանք մենք մեզի մաղթենք,
 Մեր նըպատակն ալ, շուտով կատարենք»:



Սէ՛ր ա՛խ սէ՛ր, թըո՛ր սըլացի՛ր հեռուն,
 Տես ու՞ր կը գըանես սըրտիս սիրուհուն
 Նա միշտ քու կըզ է և դուն էլ նըրան
 Ապրիր նըրա հետ մինչև յաւիտեան:



Ծ Ծ Ծ Ե Ռ Ն Ա Կ



Ո՛վ իմ ծիծեռնակ ո՞րտեղից կ'ուգաս,
 Քաղցըր երգելով ու՞ր պիտի երթաս.
 Վայրկեան մը կեցիր տամ քեզ մի ծըրար,
 Յոգնած կ'երեւիս քիչ էլ հանգիստ առ:

Աղուոր թըռչունիկ ձայնըդ գեղեցիկ,
 Կը գովեմ զքեզ ո՛վ դու սիրունիկ.
 Անհիւրընկալ տեղս չունի՞ս դուն բունիկ,
 Մեզ նըման դու՞ն էլ եղած ես չըջիկ:

Մեզ պէս հալածուած հեռու երկիրներ,
 Զաղուկներ հանած ամեն տեղ ցրուե՞ր,
 Զմեռը գալուն քեզ բոյն չե՞ս գըտեր,
 Թըռչելով ուղիղ մեզ մօտ ես եկեր:

Առ այս նամակըս եղիր ունկընդիւր,
 Գրնա՛ մեր երկիրն ու բոյնըդ հոն դէր,
 Զագուկներդ հանիր, ծըլիւր ու աճիր,
 Ապրիւր երջանիկ ու խիստ բազմացիր:

Ա՛խ իմ ծիծեռնակ, շուտ թըռիւր արագ,
 Ալ մի՛ սպասեր երկար ժամանակ,
 Ապրի՛ր մեզանում միշտ էլ անվրտանդ,
 Այնտեղ շա՛տ լաւ է օդն ու եղանակ:

Թըռի՛ր, սըլացի՛ր շատ ես ուշացած,
 Շալժէ թեւերդ մ'իջնար ո՛հ դու ցած,
 Առխակի վարդը վաղուց է բացուած,
 Կոյս արեն իր լոյսն աշխարհին սփռած:

Երբ կը հասնիս մեր ցանկալի վաթան,
 Հոն տեսնես լըծուած արօր ու գութան,
 Նամակըս շո՛ւտ տուր, որ բացեն կարդան,
 Նըրանք են միայն, որ մեզ պիտ' գըթան:



ՀԱՍՆՈՂ ԿՈՐԱԻԱՆԸ



Գալիս են գալիս իրար ետեւից,
 Գալիս են հասնում՝ հեռու ափերից,
 Ամենքն տառապում իրենց ցաւերից,
 Մոռացուած բոլոր մարդկանց խաւերից:

Գալիս են գիգուում ամայի երկրում,
 Պաքուպայի տաք սև անապատում,
 Ամենքն զրկուած քաղցըր վաթանից,
 Բոլորն ալ իրենց սիրելիներից:

Օրեր, շաբաթներ, ամիսներ քալած,
 Փողովուրդի մէջ ոյժ չէ մընացած,
 Հազարներ ու ժթաթ ճամբին են մեռած,
 Դեռ այս ամայի վայրը չը հասած:

Հասնողների մէջ շատը հիւանդներ,
 Լցուած են բոլոր հիւանդանոցներ,
 Գերեզմանները լիքը մեռելներ,
 Խիտ շատ են աւա՛ղ, որբ մընացողներ:

Չըկայ ո՛չ մէկը որ խղճայ նըրանց ,
 Ասէ , գոնէ՝ ա՛ն մի կտոր չոր հաց ,
 Աստուած էլ կարծես շատ շուտ մոռացած ,
 Կարծես խեղճերը դեռ քիչ են տանջուած :

Անտէր , անլեզու , խեղճ գաղթականը ,
 Չունի աշխարհում իրեն նըմանը ,
 Նա խեղճ է ապրել և խեղճ էլ կ'ապրի ,
 Մինչև որ իրեն արև մը ծագի :



Լ Ա Ն Պ Պ Ո Ւ Մ



Չուարթ և անփոյթ օր մը գարնային ,
 Երբ ման կուգայի մէջ բուրաստանին ,
 Ես քեզի տեսայ , ջինջ եթերային
 Աչքերըդ ինձի կ'ապաստանէին :

Սիրտըս գերեցիր , ա՛խ , ճիշտ այդ օրէն
 Երբ հուր աչքերովդ զիս փոթորկեցիր ,
 Անցար իմ մօտէն , գացիր վէսօրէն ,
 Լսել չուզեցիր , երբ ըսի՝ կեցի՛ր :

Ես այն օրուրնէ անքուն եմ դարձած ,
 Նոյն պարտէզն ըրեր , իմ ուխտատեղին
 Հոն կը տեղերիմ աչքերըս միշտ ցած
 Կը քալեմ ես միշտ քու գացած ուղին :


Հեռապնդումիս կրքոտ սիրազեղ ,
 Վերապահօրէն զգոյշ ու տարտամ ,
 Ինձ հետ խօսեցար վեհերոտ այսնեղ ,
 Եւ ըսիր — կուզե՞ս որ քեզի խօսք տամ — :

Ձայնովըդ թովիչ ըրիր ուխտ սիրոյ,
Արձակ համարձակ Աստուած է վրկայ:
— Կը սիրեմ ըզքեզ, քուկդ եմ, — ըսիր ո՛հ...
Ինձի կեանք կուտայ և յոյս՝ ասիկա :

Բուրաստանիս վառ ծաղկօք անհամար,
Յօրինեմ պսակ սիրուն քեզ համար :

Հանդոյն այդ ծաղկանց միշտ բուրումնաւէտ
Թող լինի մեր կեանքն երջանիկ յաւէտ :





— ԳՄՈՐԵՆՆ ԵՄՈՒ ԹՅ—



ԷՍԹՆԱՅԵՆԻ ՈԳԻՆ



ՉՕՆ՝ ՍԻՐԵՑԵԱՆԻ ԵՂԵՐՍՈՒ ԼԵՒՈՆ Է. ՇԱՀՈՅԵԱՆԻՆ

Հուրի մը չքնաղ, ձայնովն քաղցրալուր,
 Ինձի երկարեց մի բաժակ պաղ ջուր,
 Եւ երբ «ո՛վ ես դուն» իրեն հարցուցի
 -Ոգին եմ, ըսաւ, մայր Հայաստանի:

Ան ինձ նայեցաւ սրտով վշտացած,
 Կարծես նախատինք տուաւ ձայնով ցած.
 — Ի՞նչ էք հեռացել երկրէն ծաղկաւետ,
 «Եւ Արարատը մոռացել յաւետ:

«Յանու՛ն հայ Ազգի, մոռցէք վէճեր սին,
 «Եղէ՛ք մէկ հողի, սրտով միասին.
 «Բաւ է որ տուիք այսքան նահատակ,
 «Որոնք չեն հանգչեր նոյն իսկ հողի տակ:

||
 «Անոնք չը մոռնաք, չ՛ընէք մրտահան.
 «Որք Ազգի սիրոյն նահատակուեցան.
 «Անձնուիրաբար, մտան գերեզման,
 «Անիին, բարէ՛, ոչ իսկ ատրասցան:

«Սէրով միացած, Հայ դառին պաշտպան,
 «Մեր ստրկութեան փրչրեցէ՛ք շրջման.
 «Զեռք ձեռքի տուած դարձէ՛ք Հայաստան,
 «Մաղկեցուցէք զայն, ըրէք բուրաստան:

«Տեսնելով շուրջրս Հայեր լի, առատ,
 «Կազմած միութեան նոր ուխտ մ՛անարատ,
 «Կ՛անմահանամ ես, կ՛առնեմ շունչ ազատ,
 «Ալ չեմ խոժոռեր դէմքրս միգապատ:


«Անի քաղաքի բերդն է հոյակապ,
 «Շուրջը տափարակ, դաշտ է սարապատ.
 «Պալատներ ունի հին, կամարակապ,
 «Հայերով պէտք է նա լինի ապատ»:

— «Ներշնչումովը կը հրճուէր Ոգին,
 «Եւ ձայնով տարտամ ըսաւ՝ կաթողին:
 «Այն ատեն միայն ես պիտի խայտամ,
 «Եւ, ուրախ սրտով, Հայուն ողջոյն տամ:

պարտաս.

ԳՐԻԳՈՐ Հ. ՇԱՀՈՅԵԱՆ





ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԵՐ



Ես յիշում եմ հին օրերս,
Որքա՛ն յստակ, որքա՛ն լաւ .
Ես յիշում եմ հայրենիքըս,
Նա որ ինձի կեանք տուաւ :

Ես յիշում եմ պաղ ջուրերը՝
Եղեմական այն երկրի,
Ես յիշում եմ զուտարթ կեանքը՝
Իմ հայրենի դաշտերի :

Ես յիշում եմ հովի օրօրն՝
Այդ հոյակապ սարերի,
Եւ անթիւ շարքն ակօսների՝
Իմ հայրենի արտերի :

Յիշում եմ ջինջ աղբււրները՝
Հստող կուրծքէն իմ երկրի,
Գեղածիծաղ գետակները,
Ինչք՛ան յստակ, լերկրալի :

Ես յիշում եմ սոխակները
Իմ մայր երկրի թուփերի,
Նրանց անվերջ դալալները,
Այնպէ՛ս թովիչ, քաղցրալի :

Յիշում եմ դեռ շա՛տ շա՛տ բաներ,
Կարօտալի՛ իմ երկրէն .
Այժմ ոչինչ չէ մնացել,
Բացի լացող աւերէն :

Հիմա օտար երկնքի տակ
Թոյն եմ ծծում օդի տեղ,
Մնացել եմ խեղճ ու միակ,
Չունիմ յարգանք ոչ մի տեղ:

Թէեւ հեռու, շատ հեռու եմ
Իմ հայրենի սուրբ երկրէն,
Բայց խանդակաթ զեռ սիրում եմ,
Հայրենիքըս, վեհօրէ՛ն:



Պատմ. և մեթոդ. մանկ. խոյն.
Միսր հայրամայրի սուրբ անունը
Իր մայր հայրենի հայրենիքըս

ԱԶԳ. ՀԵՐՈՍ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ




Վարդը կը բացուի գունազեղ ու պերճ,
Հանդույն այտերուն ամօթխած կուսին,
Սիրուն մշակուած իմ պարտէղին մէջ,
Փարթամ իր բոյրով՝ փուշով միառին:

Կապուտակ գոյնով համետ մանուշակ,
Պահուած մացառու տակ ուռիներու,
Շինէ իր սունը տեղեր անմըշակ,
Եղերքը խոնաւ զով առուներու:

Խնամք կը սիրէ փափուկ չուշանը,
Անարատ ճերմակ հոտաւէտ համակ՝
Ծաղկումով կուտայ զարնան նշանը,
Իր վրայ յածի անառն թրթեռնակ:

Կարմիր ու հպարտ անհոտ կակաչը,
Բուսած ու մեծցած մօտիկը ձորին,
Միշտ կ'արհամարհէ արտի կանաչը,
Որ մեզի կուտայ հատիկը ցորեն:



Ոսկի թերթերով նարկիզը գեղին,
 Անդին զարդարանք օծուն վարսերուն,
 Կ'աճի կը փթթի պարտէզը գեղին,
 Հմայքն է համետ շիկնող հարսերուն:

Պատատուկի թեւ ոտերը ճկուն,
 Յենարան գտած թուփ կամ ցից մ'անշուք
 Փոխ կուտան անոր սաղարթ ու գոյն գոյն
 Չանդակ ծաղիկներ պերճանք գեղ ու շուք:

Բոյրը պարուրող ճերմակ յասմիկին,
 Թաղարիս հողէ՞ վայելքը ծիծղուն,
 Բան չ'արժեր փունջըս առանց այս մէկին
 Բերկրանք մ'է սիրոյ իր ծիղն ու ցօղուն:

Հմայք, տեսք սիրուն՝ գեղշուք, սէր ու բոյր
 Խունկ ծաղիկներէ պսակ մը անդին
 Քաջ Անդրանիկի որպէս հուսկ համբոյր
 Կը ձօնեմ շիրմին Հերոսի Ազգին:



ԱՅՅՍ ՏԻԳՐԻՍԻՆ



Դեռ չի ծագած սիրուն արփին,
 Ես՝ ուխտաւորս մեծ Տիգրիսին՝
 Հասայ անոր մօտը ափին,
 Ու գիտեցի ջուրն տրտմազին:

Հպարտ ու վեհ կը գալարի.
 Խռովքն հոգւոյն մէջ նւաղուն,
 Մինչ մօտն անվերջ կը ծիծաղի
 Հովիտն դալար, ծաղկոտ, նախտուն:

Անփոյթ է նա, չունի խայտանք,
 Ոչ ալ լոյսի խուրճն արեւին.
 Ոչ իր ուժը անաշխատանք,
 Ունի կիրքը խենդ փոթորկին:

Ճիշտ իրեն պէս սիրտս ալ տխուր՝
 Մտերմութիւնն անոր կ'զգայ.
 Վի՛ն մ'է հողիս, անդունդ մը, ուր՝
 Մութը տմոյն կը խորունկնայ . . . :

Տանապանքներ շատ ես տեսեր,
Ո՛վ յար պղտոր դու գեա հսկայ,
Ծոցէդ ծնաւ թէ՛ յոյս՝ թէ՛ սէր,
Նախճիրներու եղար վրկայ . . . :

Մեր տխրութեան համակ պատճառ,
Եղան ատող, դժխեմ մարդիկ,
Ատելութեան ,աւա՛ղ, չի՛ք ճար,
Ցորչափ կիրքը խօսի սաստիկ . . . :



Ազգ. Հերոս Անդրանիկի յիշատակին եջ	57
Այցս Տիգրիսին	» 59
Անգոյք սիրական	» 28
Անկեղծ սեր. . .	» 36
Բանսում միայնակ	» 29
Լոխր դու Սոխակ	» 7
Խաբուած սերը	» 32
Ծիծեռնակ	» 41
Կորցրած բաղդը	» 31
Հանդիպում	» 45
Հասնող կարասանը	» 43
Հեռացի՛ր մերիկ	» 15
Հոգիս խաւարեց	» 22
Մանկութեան յուշեր	» 52
Շարան շարան	» 9
Զորս կողմը լաց Պսոնպայի	» 11
Պսոնպայի գաղթականը	» 19
Սոխակն անապատում	» 17
Սոխակ	» 24
Տառապանիս	» 26
Տիգրիս	» 20



4548

27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50

ՀՀ Ազգային գրադարան



NL0695755

11
14846

ԳԻՆ 1 ԲՈՒԲԻ
ԱՐՏԱԾԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ ԿԷՍ ՏՈՒՍՐ